*Issue 11/2026*

# The Engineering City Journal

*Published by the Engineering Association* *Yerevan, June 26, 2026*

*The purpose of the Journal is to disseminate knowledge, experience, and best practice in engineering & manufacturing.*
*The articles are written by practicing professionals in the Engineering City (EC) in Yerevan. They cover issues relevant to their projects, operations, and organizations.*
*The articles address the challenges of the time. As such, the Journal is also a chronicle of the evolution of the EC, its companies, and its individuals.*
*It is the aim of the Journal to advance the engineering & manufacturing practice, to enrich the engineering & manufacturing community, and to contribute to the worldwide discourse in engineering & manufacturing.*

## Table of Contents

ARMENOLOGY CORNER ..... 1
**. ՏԱՃԱՐ, ԹԵ՞ ԻՐԱՐԻՑ ՀԵՌՈՒ ԸՆԿԱԾ ՔԱՐԵՐ** ..... 1

## Armenology Corner

### . ՏԱՃԱՐ, ԹԵ՞ ԻՐԱՐԻՑ ՀԵՌՈՒ ԸՆԿԱԾ ՔԱՐԵՐ

*by Lusya Adamyan, Advanced Technology Group*



Հարցեր որոնք աշխատանք են

**Ինդիվիդուալ գիգանտնե՞ր,թե՞ համակարգ**

**Առանձին հաջողություննե՞ր,թե էկոհամակարգ**

**Մարզե՞ր,թե՞ միայն Երեւան**

**Փազլի կտորնե՞ր,թե՞ ամբողջական պատկեր**

**Քարե՞ր,թե՞ տաճար**

Կրթությունը ուժ է:

Բայց ուժը միայն գիտելիքի մեջ չէ: Ուժը՝ գիտելիքը արդյունքի վերածելու, արդյունքը միջավայրի վերածելու և այդ միջավայրը հաջորդ սերնդին փոխանցելու կարողության մեջ է:

Վերջերս ինձ հաճախ է անհանգստացնում մեկ հարց:
Ի՞նչ ենք մենք ուզում կառուցել:

Հաջողված մարդկանց, թե՞ հզոր համակարգ:

Որովհետև իմ համոզմամբ յուրաքանչյուր ինդիվիդուալ գիգանտ առանց համակարգի նման է տաճարից հեռու ընկած քարի, իսկ համակարգն ինքնին տաճար է, որտեղ յուրաքանչյուր քարի ձևն ու տեղը նախապես պատկերացնելի են:

Հարցը միայն այսօրվա մասին չէ:

Հարցը վաղվա ժողովրդի մասին է:

Հարցը այն մասին է, թե արդյոք մենք պատասխանատվություն վերցնո՞ւմ ենք նրանց համար, ովքեր այսօր դեռ երեխաներ են, բայց վաղը պետք է դառնան մեր երկրի սյուները:

Վերջերս Առաջնորդության դպրոցի նախաձեռնությամբ այցելեցինք գյուղ Կոթի: Ճանապարհին զգուշությամբ էինք անցնում որոշ հատվածներ, որոնք գտնվում էին հակառակորդի նշանառության տակ: Հետո իմացա, որ երբեմն երեխաներին ասում են առանց ծնողների դուրս չգալ, կամ ընդհանրապես որոշ ժամանակ տնից դուրս չգալ:

Եվ ես ինքս ինձ հարց էի տալիս.

Ինչո՞ւ:

Ինչո՞ւ ես պետք է իմ սեփական հողի վրա սահմանափակված լինեմ:

Ինչո՞ւ ես պետք է չկարողանամ վայելել իմ բնությունը, զբաղվել, ստեղծել և արարել:

Եթե ես չեմ տիրում ինձ, ինձ կտիրեն:

Եթե ես չեմ տիրում իմ հողին, իմ մտածողությանը, իմ գիտելիքին, իմ ապագային, ապա ուրիշները կձևավորեն դրանք իմ փոխարեն:

Եվ այստեղ ես հասկացա, որ հարցի պատասխանը արտաքին չէ:

Հարցի պատասխանը ներքին ուժն է:

Երևի բոլորի մեջ էլ կա այդ ներքին ուժը: Գուցե տարբեր մակարդակներում, գուցե ոչ բոլորի մոտ է այն գիտակցված, բայց այն կա:



*Նկ 1. Հատված Կոթի,Բաղանիս,Ջուջևան,Ոսկեպար սահմանամերձ գյուղերի երեխաների հետ նպատակների և զարգացումների մասին խոսելիս*

Այդ օրը ես լսում էի ուսուցիչներին:

Նրանք ասում էին, որ երեխաները հաճախում են ԹՈՒՄՕ, Արմաթ, տարբեր ծրագրեր, բայց հաճախ բացակայում է ամենակարևոր հարցի պատասխանը:

- «Ինչի՞ համար»:
- Այո, ես գնում եմ:
- Բայց ինչի՞ համար:
- Այո, ես սովորում եմ:
- Բայց ինչի՞ համար:
- Այո, ես ուզում եմ դառնալ ինչ-որ մեկը:
- Բայց ո՞վ:

Եվ այդ պահին ես հասկանում էի ուսուցիչների ցավը:

Ոչ թե այն, որ երեխաները չեն սովորում:

Այլ այն, որ երբեմն այդ ամբողջ աշխատանքը նման է իրարից անջատ փազլի կտորների՝
առանց պատկերի, առանց ուղղության, առանց օրինակների:

Եվ ինչ-որ տեղ հասկանում էի նաև նրանց կատարած աշխատանքի անարդյունավետության զգացումը:

Բայց ես երեխաների մեջ ուրիշ բան էի տեսնում:

Ես տաճարներ էի տեսնում:

Յուրաքանչյուր երեխա մի տաճար է:

Պետք է միայն տեսնել նրանց ոգին:

Տեսնել նրանց նպատակասլացությունը:



*Նկ. 2,3,4,5 Դպրոցի բակն է,որն անմիջապես գտնվում է հակառակորդի դիտարկման տակ, երեխաներն ամփոփում են այն տպավորությունները՝ որոնցով ներշնչվել էին մեր գործընկերներից*

Եվ այո՛, ժամանակի ընթացքում նրանց միջից կլինեն ինստիտուցիոնալ գիգանտներ:

Բայց հարցը սա է.
**Ինչի՞ համար:**
**Ո՞ւմ համար:**
**Որտե՞ղ:**

Արդյո՞ք մենք կարողանում ենք նրանց միավորել նույն Էկոհամակարգի մեջ:

Արդյո՞ք մենք ուզում ենք ունենալ տաճար:

Թե՞ տաճարից հեռու ընկած քարեր:

Վատ չէ, երբ մարդն ինքնուրույն է անցնում ճանապարհը: Բայց ափսոս է, երբ ինչ-որ մեկը արդեն անցել է այդ ճանապարհը և չի կիսում այն հաջորդների հետ…

Էկոհամակարգն է, որ գիտի տաճարի յուրաքանչյուր քարի տեղը: Որտեղ յուրաքանչյուր քար իր արժեքն ունի: Որտեղ յուրաքանչյուր քար իր նշանակությունն ունի:

Եվ այդ ազդեցությունը երկարատև է:

Ես հավատում եմ, որ Հայաստանը կարող է դառնալ ոչ միայն արդյունաբերական կենտրոն:

Ես հավատում եմ, որ Հայաստանը կարող է դառնալ միջավայր:

Այնպիսի միջավայր, որտեղ theory-ն դառնում է practice:

Որտեղ գիտելիքը դառնում է արդյունք:

Որտեղ արդյունքը դառնում է փորձ:

Իսկ փորձը՝ նոր գիտելիք:

Որտեղ յուրաքանչյուր համայնք պահպանում է իր յուրահատկությունը և դառնում ուժի աղբյուր:

Ես հավատում եմ այն Հայաստանին, որտեղ հզոր է ոչ միայն Երևանը, այլ նաև մարզերը:

Որտեղ համայնքները պարզապես բնակավայրեր չեն, այլ ուժի կենտրոններ:

Որտեղ մարդիկ գալիս են ոչ միայն սովորելու, այլ ստեղծելու:

Միայն մարզում ապրածը կգիտակցի՝ ի՞նչ պետք է արարել և ի՞նչի կարիքն է զգացել: Չէ՞ որ ամեն նորարություն կամ չեղացիծ է սկզբնավորվում կամ ոչ բավարար եղածից:

Եվ գուցե այս աճի գագաթնակետը պետք է ամփոփվի նրանով, որ մի օր Հայաստանը դառնա այն կրթական և տեխնոլոգիական կամպուսը, որի փորձը, գիտելիքը և միջավայրը կցանկանան ունենալ նաև այլ երկրներ:

Որտեղ մարդիկ կգան ոչ միայն մեզանից ինչ-որ բան վերցնելու, այլ նաև մեզանից սովորելու:

Որտեղ մենք ոչ միայն սպառող կլինենք, այլ ստեղծող:

Եվ ԱՅՈ՛,ոչ միայն օգտվել ուրիշների փորձից, այլ դառնալ փորձ փոխանցող:

Ի վերջո,որտեղ ներդնենք մեր էներգիան և մեր ջանքերը, այն էլ կունենանք…

Յուրաքանչյուր քայլում ոգենշչելով ոչ թե հեռավոր երազանքով, այլ ոչ այնքան հեռու գտնվող ապագայով:

Այո՛, մենք ենք:

Մենք պետք է դառնանք այն համակարգը,որը յուրաքանչյուր մարզին թույլ կտա իր ներսում ձևավորել ուրույն համակարգ,պահպանելով իրեն հատուկ ոճը՝ առանձնահատուկ լինելով:

Առնվազն սկսելով մեզանից որպես նորաթուխ Ինժեներական Էկոհամակարգ, առաջնորդելով օրինակով, վերցնելով պատասխանատվությունն այն կյանքերի, որոնք էլ կյանքն են դառնալու նոր, ուրույն, յուրահատուկ էկոհամակարգի.

Մենք այն համակարգն ենք, որը գիտի և պետք է շարունակի իմանալ ամեն քարի, սյան տեղն ու ձևն իր ներսում…

Եվ հենց այդ է պատճառը, որ մեր ամենամեծ պատասխանատվությունն այսօրվա կորիզի, և վաղվա կյանքի մեջ է…

———————

© 2026 The Authors of the articles

All materials contained in *The Engineering City Journal* may be used with reference to the Authors.

For feedback on the *Journal*, its content, and its articles please send to info@engineeringcity.am.

To submit articles, please send to info@engineeringcity.am. Articles can be in any language.